

Կանոնագրական

ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Թիֆ 4



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԿԻԴԱՅ ՀԱՆՐԱԿԻԴԱԳ HANRAKIDAG
ՀԱՐԱԹԱԿԱՆ ՄԱԾԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆԻԱՆ ԵՆԿԼՈՊԷԴԻԵ

Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԴԹԻԻ 4 || 24 ՅՈՒՆԻՍԻՐ 1994



Wm. E. Fitzgerald
(officer)

ՄԻՍՍԱՔ Ա. Մ. ՊՕՉՈՒՆՆԱՆ

(Ք Ա Ս Ի Մ)

Մանգուսի, Երկուշաբթի օրուան թիւովը խիստ հաճելի անա-
կընկալ մը ըրաւ իր ընթերցողներուն՝ Քասիմի կենդանագիրը
հրատարակելովը:

Այն օրէն՝ երբ մեր ժողովուրդին սրտին ամէնէն սիրական
գիրքը՝ Նարեկը՝ իր հասկցած լեզուին վերածուեցաւ, երբ իր
մտքին դիւրամբունելի և իր կեանքովը ապրուած վէպը ԿՆՆՈՍ
Հանգոյց մըն հրատարակուիլ սկսաւ, ամէն հայ փափաք մը ունե-
ցաւ տեսնելու այդ մարդը որ կարծես գուշակած էր իր սրտին ու
մտքին սիրելի եզոզ բաները:

Մեր մէջ Քասիմ առաջինը եղած է որ ձեռնարկած ըլլայ օ-
րաթերթի մը թերթօնը գրելու դժուարին գործին: Իր առաջին
վէպէն՝ Խորհրդաւոր Աղջիկ մըն որ նախափորձ մը ըլլալով հան-
դերձ այնքան անյագութեամբ կարդացուեցաւ, մինչեւ այսօրուան
հրատարակած ԿՆՆՈՍ Հանգոյց մըն որ ամէնէն կատարեալն է,
չարք մը կը կազմէ իրարմէ լաւագոյն վէպերու որոնց թիւին եւ
ոչ մէկ հայ վիպագիր հասած է:

Ինքնօգնութեան օրինակները, մենք շատ հեռունները՝ Ամերի-
կայի, Եւրոպայի մէջ կ'երթանք փնտռելու. աւելի դիւրին չէ՞
միթէ Մանգուսի անհատնում սանդուղներէն մագլցելով մտնել
խմբագրական սրահը ուր կը բազմի, միշտ ժպտադէմ, ՔԱՍԻՄԸ:
Ինչպէս ինք կը յիշատակէ Ասիաբաբար Նարեկի մէջ իբր վերջա-
բան իր մօր ուղղած երախտագէտ Զօնին մէջ, տղայութենէ զրկը-
լած հօր մը հոգածու խնամքներէն ու՝ պաշտպանութենէն, ագ-
նուստիտ մօր մը գուգրուրանքին տակ՝ նախնական կրթութիւն
մը միայն ստացած ըլլալով հանդերձ, հասած է խմբագրապետի
հոգնաաւանջ դիրքին՝ ամէնէն ժողովրդական թերթին: Եւ ամբողջ
ասպարէզի անցումին մէջ՝ Քասիմ գիտցած է պահել իր զուար-
թութիւնը և խնդալ բաղդին վրայ երբ որ ան չէր խնդար իրեն:

Միշտ աշխատիլ և զուարթ ըլլալ՝ ահա իր բնաբանը, որու
միջոցաւ յաջողած է նախանձելի դիրք մը գրաւել և ամենուն
սիրելի դառնալ: Եւ եթէ հարկ ըլլար նորէն սկսիլ կեանքը ու
անոր ընտրութիւնը իրեն թողուէր՝ Քասիմ ասկէ տարբեր կեանքի
մը չպիտի բաղձար անշուշտ:

Ուրախ ենք որ Քասիմ կ'արտօնէ մեզ իր գեղեցիկ կենդանա-
գրովը զարգարել Հանրագիտակի այս թիւը:

ԹԱԴԷ՛, ԹԱԴԷ՛, ԲԱՐՁՐ ՀԱՅԵԱ՛Յ

(ԿՐՕՆԱԿԱՆ ԱԻԱՆԳԱՎԷՊ)

Քրիստոնէական երկնառաք կրօնքին արգաւանդ լոյսը դեռ ճառագայթած չէր սիրտերուն մէջը Հայերուն, որոնք, Արտեմիաներու, Նանէներու, Գիսանէներու, Բարչամներու, Դեմետրէներու կոյր պաշտամունքներուն ու երկրպագութիւններուն արքըռութիւնովը կը գոհացնէին իրենց հոգիին կրօնական բնազդը:

Հոգեկան այս լուսաւորութեան կայծը բերելու պաշտօնը, վիճակուած էր Թադէոս Առաքեալին, որ Քրիստոսի յարութենէն ետքը, շատ մը տեղեր իրեն քարոզութիւններուն գոհարները ցանցնելով, հասած էր Արդրնի շրջակայքը, որուն բանաստեղծական տեսարանները, ամպածրար լեռները, սառնորակ ու անմահական ջուրերը, եւ բնութեան հրաշակերտ վրձինովը դրասանդուած դաշտօրանները, զինքը կ'ընկղմէին վերացումի ու զեղումի անբացատրելի գինովութեան մը մէջ:

Սակայն, այս հիացումին տպաւորութիւնը, տիրութեան դառն գրուագներով կը թունաւորուէր, երբ կը տեսնէր ուր, բնութեան այդ եղեմային գորգին մէջ, կը բնակի ժողովուրդ մը, որ բոլորովին զուրկ էր ճշմարիտ Արարչին ու Աստուածորդիին գիտակցութենէն ու պաշտումէն:

Իրեն առաքելական պարտականութեան մղումովը, այդքան բնական գեղեցկութիւններ վայելող մարդկային զանգուածը, քրիստոնէական կրօնքին ճշմարտութիւններովը կրթելու համար, կ'որոշէ այդ շրջակայքին մէջ կառուցանել մենաստան մը, որ յաւիտենական ռահվիրայի մը պէս իրեն քաշէր շրջաբնակներուն ակնարկները:

Այս նպատակին համար յարմար կը սեպէ բլրահարթ մը, որ մօտակայ երկնակարկառ լեռնով մը պատնիշուած էր, եւ որուն ստորոտը կը գտնուէր կաթնաղբիւրը, որուն ջուրը կաթէն ու մեղրէն ալ համով էր:

Անմիջապէս, ատաղձներ կը հայթայթէ, գործաւորներ կը վարձէ, ու աշխատութիւնները կ'սկսին եռանդագին թափով մը:

Մինչեւ իրիկուն կը շարունակէ գործունէութիւնը, ու երբ արեւմուտքը կը բոսորագեղուի արեգակին վերջամասց շողերովը, գործաւորները քնանալու կ'երթան:

* * *

Աղօթարանը բացուած է: Զորս կողմէն, վերէն ու վարէն, շողի, շաղի, թոյրի, բոյրի, երգի ու աղօթքի բանաստեղծու-

Թիւն մըն է որ , հոգիները կը պարարէ , ռնգունքները կը գրգռուէ , ու սիրտերը կ'ելեքտրականացնէ : Հոս , ցօղին մարգարտափայլ հիւլէներն են որ կը պսպղան , աւելցնելով հրապոյրը կանաչութիւններուն , որոնք արշալոյսի շուշան բոցավառութիւններուն առջեւ կը հայելիանան : Հոն , թռչուններու երգն է որ , օրուան ծագումը կ'ողջունէ , իրեն ստեղնաշարին վրայ ժողովելով բոլոր խաղերն ու շէտերը արարչագործութեան հրաշալիքներուն , որոնք կապոյտ ու կանաչ երկինքներու կրկներեւոյթին մէջ կը ծփան : Ու այս ամէնուն վրայ , հմայական ջնարակ մը կը վառի , գոր բնութիւնը քսած է , իրեն վհկութեան նկարագէղ վրձինովը :

Գործաւորները կ'արթննան , բնութեան զարթօնքին հետ վերսկսելու համար իրենց աշխատութիւնները :

Բայց , յանկարծ , գարմանքի , ապշութեան ու շուարումի հոսանք մըն է որ բոլոր գործաւորները կ'ողակէ , որովհետեւ , ճարտարապետական գործիքները , որոնք այնքան լուրջ հսկողութեան մը առարկայ եղած էին բոլոր գիշերը , մոգականօրէն անյայտացեր են :

Ապահովաբար , ցաւի ու շփոթութեան ամէնէն մեծ բաժինը կը վերաբերի Թաղէոս Առաքեալին , որ այս առեղծուածային անհետացումին հանդէպ , կ'զգայ յուսահատութեան գելուճներ , տունջանքի նոպաներ , որոնք վայրկեան մը զինքը խելայեղութեան մօտիկ աստիճանի մը կը մատնեն :

Վայրկենական կերպով , այս վարանքը կը փոփոխի սարսուռի մը , երբ բարձր տեղէ մը ձայն մը կը լսէ , որ մեղեդիի մը անուշութիւնովը , ու գեփիւռի մը թաւշութիւնովը բոլոր անջրպետը կը գրկէ , « Թաղէ' , Թաղէ' , բարձր հայեաց » :

Զսպանակի մը վրայ լարուածի պէս , գլուխը վեր կը բարձրացնէ , ու գերահրաշ սքանչացման մը համակումովը կը տեսնէ որ , Տիրամայրը՝ գրկին մէջ սեղմած իրեն Աստուածագեղ զաւակը , Սերովբէներու եւ Քերովբէներու հանդիսաւոր պարառութեանը մէջ , նստած է մօտակայ երկնադրացի լեռան կատարին վրայ :

Ներշնչումի մը զօրութեամբը կը հասկնայ Տիրամօր նպատակը , ու անմիջապէս , բոլոր գործաւորներով կը փոխադրուի հոն , ուր կը գտնէ նաեւ անյայտացած գործիքները :

Այդ նուիրական բարձունքին վրայ , կը կառուցանէ հոյակապ վանք մը , որ տասն եւ ինը դարերու երկար շրջանաւորութեան մը մէջ պահած է իրեն գոյութիւնը , եւ այդ երեւոյթին յիշատակին համար , « Բարձրահայեաց Ս . Աստուածածնի վանք » կ'անուանուի :

Տիարպէթիր

ՅԱՅՈՒ ՓԱՓԱՋԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՄԿՕՅԻ ՀԱՇՈՒԵԿՇԻՈՐ

ՊԱՊՕ -- Աղքատ գործաւոր մը:

ԳԱՐԵԳԻՆ, ԲԱՐԹՈՂ, ՍԻՆԵՔԵՐԻՄ, ՆՈՐԱՅՐ, Պապոյին զաւակները:

ՆԱՀԱՊԵՏ ԱՂԱ. — Զոջ հարուստ մը:

ՂՈՒՆԿԻԱՆՈՍ. — Նահապետ աղային պնակալէզը:

ՄԿՕ, պատուելի Զայրմար, ձանօ, Մարկոս, Սէկրօ. — Բարեկամներ:

ՏԵՍԻԼ Ա.

ՊԱՊՕ, (առանձին):

Վաղը նոր տարի է. ասի աղէկ. բայց սա իրիկուան կաղանդի սովորութիւնը զիս շուարումի մէջ կը ձգէ: Արդէն տարուան մը վաստակս հազիւ հազ տուն մը և զաւակներս անօթի չմեռցնելու կը բաւէ: Սակայն, ինչպէս, սանկ նուէրներ մը չգնած տուն երթամ: Առանց կաղանդչէքի այս իրիկունը կ'անցնի՞, վերջացող տարւոյն սկիզբէն տղոց հանգերձները բզիկ բզիկ եղած էին, եւ զիրենք այս առթիւ յուսադրած էի որ նոր Տարիին նոր հանգերձներ կարել պիտի տամ:

Ինչպէս ձեռնունայն դառնամ անոնց բոլոր ակնկալութիւններն ու յոյսերը հիասթափութեան մատնելով: Պէտք չէ որ ձեռնունայն տուն երթամ, լեցո՛ւն կամ երբէ՛ք: Գոնէ ես անոնց յուսախաբութեան կծկումը չտեսնեմ դէմքերնուն վրայ: Վա՛խ, նորայրս, տարի մըն է բոկոտն կը պտտի, բայց օր մը ձայն մը, տրտունջ մը չբարձրացուց. « Հայրիկը նոր Տարիին ինծի նոր կօշիկ պիտի գնէ » յանկերգովը յուսադիր: Բայց ոչ, տուն դառնալու եմ, պէտք է որ զանոնք մխիթարեմ. վիշտը բաժնեւելու է: Պիտի ջանամ զիրենք սրինգովս զօսցնել. մինչեւ որ անցնի կաղանդի գիշերը: Միտքս բան մը կուգայ, կարելի՞ չէ որ գործարանատէրս՝ Նահապետ աղայէն կանխավճար մը խնդրեմ ի հաշիւ, թէ եւ գիտեմ թէ կարեկցութիւն, գուժ ըսուած բաները անձանօթ են անոր սրտին համար: Բայց ո՞վ գիտէ. մարդ չկրնար տրամադրութիւնները հաշուել: Փորձեմ, (Կ'երթայ):

ՏԵՍԻՆ Բ .

ՊԱՊՕ, ՆԱՀԱՊԵՏ ԱՂԱ ԵՆ ԶՈՒՆԿԻԱՆՈՍ

Նահապետ. — (Պապօյին ներս մտած միջոցին). Ի՞նչ է նորէն, ինչո՞ւ եկար իմ այս բազմազբազ ժամուս. չէի՞ր գիտեր որ տարեգլխու առթիւ հաշիւներ ունիմ կարգադրելիք:

Պապօ. — Տէր իմ, քանի մը վայրկենի համար, խնդիրք մը ունիմ...

Նահ. — Էօ՞ֆ... այս խնդիրք ըսուած անամօթութիւններն ալ բնաւ հատնում չունին. բոլոր հաշիւներդ մաքրած, փակած եմ, մա՛րդ, ալ ի՞նչ կ'ուզես ինձմէ. ասոնք կարծես, աչքերնին բացած զիս կողոպտել, մերկացնել կ'ուզեն.

Զուռնիկանոս. — Իրաւ է, ի՞նչ կ'ուզէք մեծապատուաշուք, աղնուազարմիկ նորին բարձրայարգամեծարութենէն. անիկա արդէն ամբողջ քաղաքը լեցուցած է իր առատաշնորհ մարդասիրութիւններովը, բարեգործութիւններովը: Ալ ի՞նչ կ'ուզէք այսքան մեծ, աշխարհածանօթ բարերարէ մը: Պիտի կողոպտէ՞ք, պիտի մերկացնէ՞ք նորին ազնուափայլութիւնը:

Պապօ. — Իբր շնորհ, ի հաշիւ պզտիկ փոխառութիւն մը ուղելու համար եկած եմ. շնո՛րհ, Նահապետ աղա, նոր տարւոյ ուրախառիթ օրուան համար՝ երջանկութիւն մը պարգեւած պիտի ըլլաք զաւակներուս...

Նահ. — Ի՞նչ, պարտականութիւն մը ունիմ քու զաւակներդ ալ ես հոգալու, զիս այս քաղքին անօթիները կշտացնելու, մերկերը հագուեցնելու պաշտօնեա՞յ մը կարգեցին, իմ տունս աղքատանո՞ց կը կարծէք:

Զուռնի. — Ինչպէ՞ս կը յանդգնիս, Նահապետ աղային տունը աղքատանոց, հիւանդանոց կամ անկեղանոց կարծելու:

Պապօ. — Քաւ լիցի, տէր իմ, ծառայ եմ ձեր մեծապատուութեան: Մարդասիրական շնորհի մը կ'սպասեմ միայն. տարիէ մը ի վեր զաւակներս կիսամերկ անցուցին նոր Տարիին նորոգուելու յոյսով: Եւ հիմա անկարող խոստումս կատարելու, Ձեզի կը դիմեմ, իբր շնորհ, ի սէր Աստուծոյ, կանխավճար մ'ընելու. զոր քանի մը շաբաթէն կը հատուցանեմ:

Նահ. — Բայց ո՞վ ըսաւ թէ Նահապետը իր շահը կը զոհէ գրթութիւն կոչուած խենթ ու խելառ, տկար զգացումի ականջ կախելով:

Պապօ. — Գթութիւն. տէ՛ր, շնո՛րհք, ձեր արեւուն ու գործերուն յաջողութեանը համար:

Նաև. — Դեռ չես հարկնար, միամիտ մարդ, թէ ես կեանքիս մէջ իմ շահէս զատ ուրիշ ո եւ է սկզբունքի չեմ հետեւիր, իմ հաւատամքս շահն է, իմ փիլիսոփայութիւնս շահը. իմ զբաղումներս շահու առջեւ միայն կը թրվուան: Շահը, անձիս բացարձակ շահը իմ գերագոյն դաւանանքս է: Շահէն դուրս ուրիշ ամէն բան ինծի համար ձայն չունին:

Ղուկկ. — Իրաւ է, ամէն մարդ իր շահուն համար կ'աշխատի, ո՞վ խենթեցեր է որ իր շահը ոտնակոխ ընէ, առանց մեծագոյն շահու ակնկալութեան մը:

Պապօ. — Բայց տէր իմ, աղքատներն ալ հարուստներէն կ'ապրին, անոնց տրուած ձեռնտուութիւնը երկնային շահ մ'է:

Նաև. — Ո՞վ կ'ըսէ որ դուք աղքատ ըլլաք, Մենք ձեզի՞ համար կ'աշխատինք ու կը տատինք. գիշերը ցերեկին կը խառնենք. ամէն կերպ զրկանքներ կը կրենք, անօթի կը կենանք, վայելքներէ կը զրկենք ինքզինքնիս, ձեր որովայնին համար է որ հազար ու մէկ աճալարարութիւններով, աղաչելով, լեզու թափելով, սըվոր նըվոր քթին հօտը քաշելով քանի մը փարա իրարու քով կը բերենք, դուք ալ աշխատեցէք, քիչ կերէք, գիշերը մի՛ քնանաք. նայէ՛, ինձմէ աւելի առողջ ու գէր ես, ինքզինքնիդ բռնաւ չէք նեղէր. կ'ուզէք որ հարուստի մը բոլոր վայելքները ըմբռնէք, ես այս հարստութիւնը արտէն չքաղեցի, ես ալ աղքատ ծնած եմ, բայց ճակտիս քրտինքովս այս վիճակին հասած եմ:

Ղուկկ. — Այո, դուք բնաւ չէք աշխատիր, ինքզինքնիդ չէք սխմեր, ծոյլ էք, դատարկապորտ էք, եւ կ'ուզէք որ հարուստի հովեր առնէք, դուք պէտք է որ անօթի մնաք, ծարաւ եւ մերկ մնաք, թշուառ, կարօտ ըլլաք: Զեզի աշխատիլ միայն կը վայլէ:

Պապօ. — Յանուն քրիստոնէութեան, գթութիւն կը խընդրեմ, պարտականութիւն մը, քու պաշտած Աստուածդ վրադ կը դնէ, գթութիւն տկարներուն:

Նաև. — Դեռ այս ապուշը չկրնար ըմբռնել թէ ես շահէս ուրիշ բան չեմ գիտեր: Բարեսիրական հաստատութիւններու հանգանակութեանց մէջ եթէ երբէք ցանցառօրէն իմ անունիս ալ հանդիպիս, գիտցիր թէ ողորմածութիւնը՝ գործիքս եղած է, եթէ ոչ՝ ի՞նչ խենթութիւն պիտի ըլլար, « Ողորմութիւն » կոչուած ապուշ նախապաշարումի հետեւող ըլլալ, որ ծոյլերը կը խրախուսէ եւ աղքատութիւնը կը սնուցանէ: Հիմա ալ մա՛րդ, զիս այսքան զբաղեցնելուդ համար պէտք է որ դուն ինծի բան մըն ալ տայիր, սակայն ինչ որ է, ասի իբր ողորմութիւն նկատելով, անյի՛ր բանդ գնա:

Ղուկկ. — Նահապետ ազային թանկագին ժամերը վատնեցիր,

սպաննեցիր, պէտք որ հիմա դուն բան մը վճարէիր այս ժամա-
վաճառութեան համար:

Պապօ. — Շնորհակալութիւնս կը յայտնեմ ձեր բարձրաշքու-
թեանը, ինծի շնորհած ունկնդրութեանդ համար, ներողութիւն
կը խնդրեմ, ժամավաճառ ընելուս համար, եւ եթէ իրօք բան
մըն ալ վճարել պէտք է, քովս հինգ ղրշ. ունիմ, զայն ալ ձեզի
կուտամ յօժարութիւնով:

Նահ. — Սա չըվոտին նայէ՛, զիս մուրացկան մը կը կարծէ.
ծօ՛, հինգ ղրոշ ունենալէդ վերջ՝ տակաւին ի՛նչ աներեսութիւնով
դուռս կուգաս մուրալու: Ո՞վ գիտէ, տակաւին քանի դուռներ
ափ պիտի առնես, մուրացկանութեան պէս դիւրին արհեստ ի
գործ դնելու համար:


Պապօ. — Կը ներէք, Նահապետ աղա, մուրացկանութիւնը
չեմ ընդունիր: Զեզմէ աւելի թերեւս օրինաւոր ու պատուաւոր
կերպով ճակտիս հելալ քրտինքով վաստկած եմ պարէնս: Կեան-
քիս մէջ առաջին անգամ կ'ըլլայ որ ողորմութեան անունին տակ
կանխավճար մը կը խնդրեմ զաւակներուս անոյշ սիրոյն համար:
Սակայն, տխուր փորձը յայտնեց թէ ողորմութիւն խնդրելը,
տալէն հազար անգամ դժուար է: Մնաս բարեաւ, կրկին ներո-
ղութիւն տուած ձանձրութեանս համար: (Կ'երթայ):

Նահ. — Սա փաշավրայի կտորին նայէ՛, Ղուկիանո՛ս, իչտէ
ասանկները ապերախտ կ'ըլլան, բարիքը չեն ճանչնար, և ողոր-
մութիւն ուզած ատեննին ալ հայհոյութիւններ կ'ընեն. կեցի՛ր
դուն, ես քեզ սիւրիւմ սիւրիւմ սիւրիւնտիւրմիշ ընեմ որ տեսնես
թէ ի՞նչպէս կ'ըլլայ ողորմութիւն տալը:

Բուճկ. — Այո՛, ասանկ ապաշնորհ ապերախտները պէտք է
անօթի սատկեցնել, որպէս զի խելօքնան, յարգել գիտնան ար-
ժանաւորները: Թո՛ղ սատկին, թող անօթի, մերկ, անտէր մը-
նան ապերախտ շունները:

(Շարունակելի)

491-120



Abordage

Հինին տեղ նոր տեսակ ընդհարում մը կայ հիմակ որ ա՛լ աւելի սոսկալի է. պատերազմական նաւ մը բոլոր ոյժովը սուրալով դէպի թշնամի նաւը, կը ջանայ իր յառաջակողմը՝ որ սրածայր տէգի մը ձեւը ունի, անոր կողը մխել. ընդհարումը կրող նաւը անմիջապէս կ'ընկղմի և ընդհարողն ալ շատ անգամ չկրնար ինքզինքը շուտով ազատել և կամ իր կրած ֆեասները այնքան կարեւոր կ'ըլլան որ ինքն ալ վտանգի մէջ կը մնայ, — Սովորաբար Ընդհարում անունը կուտան երկու ո՛ր և է նաւերու, անհոգութեան կամ ուրիշ պատճառով մը իրար զարնուելուն: Փայտաշէն առագաստանաւերու համար ընդհարումը շատ քիչ անգամ տեղի կ'ունենայ և հետեւանքը այնքան ծանր չըլլար, ռակայն արդի պողպատեայ չոգենաւերու համար, որոնց ահագին զանգուածները ամենամեծ արագութիւններով կը շարժին, այս արկածը սոսկալի աղէտ մը կ'ըլլայ: Ասոր առաջքը առնելու համար բոլոր ծովային ազգերը միջազգային կանոններ ընդունած են: Բոլոր նաւապետները ստիպուած են հպատակիլ այն օրէնքներուն զորս 1889ի վերջերը Ուաշինկիթընի մէջ գումարուող ծովային միջազգային համաժողովին մէջ որոշուած և բոլոր կառավարութիւններու կողմէ ընդունուած են: Այդ օրէնքները կ'որոշեն այն շարժումները զորս նաւերը ընելու են ընդհարումի տեղի՝ չտալու համար, լոյսերը զորս իւրաքանչիւր նաւ կը վառէ զանազան կէտերու վրայ, ղէկի գործածութեան և ճամբու ուղղութեան կանոնները, ծայնական և մասնաւորապէս վտանգի նշանները, — Ծոգենաւ մը միշտ կը շեղի իր ճամբէն՝ առագաստանաւի մը առջեւ, իսկ երկու առագաստանաւերէ այն որ հովը կռնակէն կ'ընդունի կամ լաւագոյն պայմաններու մէջ է՝ պարտաւոր է հեռանալ հովին դէմ եկող նաւու մը ճամբէն: Ընդհարումը եթէ բաց ծովու վրայ տեղի ունեցած է, յառաջ եկած վէճը կը կարգադրուի միջազգային ծովային օրէնքներու համաձայն, իսկ եթէ ներքին ծովի մէջ տեղի ունեցած է՝ նոյն պետութեան օրէնքներուն համեմատ: Երբ ընդհարումը յառաջ եկած է անխուսափելի բնական պատճառներէ մնաստող նաւը չկրնար հատուցում պահանջել միւսէն. եթէ նաւապետներէն մէկուն պակասութեան կամ անհոգութեան արդիւնք է, ան է որ կը վճարէ բոլոր ֆեասները. իսկ եթէ կարելի չըլլայ համոզում գոյացնել պատասխանատուութեան որո՛ւ իյնալու մասին, յառաջ եկած ֆեասը կը տուածեն երկու նաւապետները հաւասար չափով: — Մշուշի ժամանակ նաւերը ստիպուած են որոշեալ մասերու վրայ լապտերներ վառել և կարգ մը նշաններ տալ. այդ մասին պակասութեան մէջ գտնուող նաւապետ մը մինչեւ 300 Փրանք տուգանքի և մէկ ամիս բանտարկութեան կը դատապարտուի. տուգանքի քանակութիւնը 500 Փրանքի եւ բանտարկութիւնը 3 ամսուան կը բարձրանան երբ այդ պատճառաւ ընդհարում մը տեղի ունենայ: — Վնասուած նաւուն օգնութիւն տանիլը պարտաւորիչ է. ընդհարումէն անմիջապէս ազատող նաւը ինքզինքը ապահովութեան մէջ դնելէ ետք ստիպուած է օգնութեան փութայ մնաստող նաւուն. եթէ այդ մասին թերանայ՝ նաւապետը 300 Փրանք տուգանքի և մինչեւ մէկ տարուան

Aboulie — About

բանտարկութեան դատապարտուելէ ետքը կրնայ ժամանակի մը համար կամ մշտնջենապէս պաշտօնէն հրաժարեցուցուիլ՝ եթէ մարդու կորուստ պատահած է:

Aboulie, Չկարուքիւն. — (Հոգեբ.) Բարոյական հիւանդութիւն մըն է: Հիւանդը ներքնապէս, մոռով կ'ուզէ, փափաք կ'զգայ՝ բանականութեան պէտքերուն համեմատ: Գործելու բաղձանքը կրնայ ունենալ սակայն անկարելի է որ բան մը ընելու կարող ըլլայ. կ'ուզէ աշխատիլ բայց չկրնար. եթէ ինքնիրեն ձգուի ամբողջ օրեր կ'անցնէ աթոռի մը վրայ կամ բազմոցին անկիւնը կծկտած: Այս հիւանդութեան պատճառ կրնան նկատուիլ զգացողութեան ընդհանուր տկարացումը, կենսական ոյժին նուազումը: Կան պարզօրէնքներ ուր կամքի այս պակասութիւնը յառաջ կուգայ անհիմն վախի մը զգացումէն: Վախին զգացումը անյաղթելի չէ որով այս հիւանդութիւնը յառաջ կուգայ տկար անձին հակազդեցիչ կարողութեան՝ սովորական մակարդակէն շատ վար իյնալէն: Կերեւի թէ այդ կարողութիւնը կախում ունի շարժիչ ջղային դրութեան սպառումէն:

About (Edmond François Valentin), Էսմոն Ապուլ. — Ֆրանսացի գրագէտ մը, ծնած Տիէօզի մէջ 1828ին. մեռած Բարիզի մէջ՝



1885ին: Գրական հրապարակ մտած է ուսումնասիրութիւնով մը՝ Արդի Յունաստանը, վէպով մը՝ Թօլլա՝ որ ահագին բանավէճեր յարուցեց. և Երիտասարդի մը նամակները՝ Հօրեղբորոքուոյն Մասըլէնին գործովը: Գրած ունի Թատերախաղեր որոնք յաջողութիւն չեն գտած, մանաւանդ Կաեքաճան՝ որու անկումէն ետքը Ապուլ բոլորովին հեռացաւ Թատրոնէն: — Իր գլխաւոր գործերէն կը յիշենք Բարիզի Ամուսնութիւնները, Ժերմէն, Մատըլօն, Հոռմէական Հարցումը, Կտրուած ականջով մարդը, Յառաջդիմութիւնը, Վատանունը, Գաւառական ամուսնութիւնները, Եւայլն, Թատրոնի համար գրած է Կաէթանաէ գատ, Կատակերգութիւն մը՝ Կուիյըրի և քանի մը մանր մուր գործեր՝ աշխատակցութեամբ կատարուած: Կրնանք նաեւ իր հաշույն անցնել կարգ մը ելեւմտական յօդուածներ եւ արհեստագիտական քննադատութիւններ ԺԺ. Դարը թերթին մէջ զոր 1871ին հիմնած է ինք: — Էտմոն Ապուլի ոճը կը յատկանշեն՝ սրամտութիւնը, յստակութիւնը, լաւ ըսելու արուեստը: Ամենէն մաքուր Ֆրանսերէն գրողներէն մին եղած է եւ ջանացած է պահել լեզուական կանոնները: Փայլուն օրագիր, քնայագիր ու չարամիտ վիպագիր՝ Ֆրանսական սրամտութեան ամենէն դիւթող ներկայացուցիչներէն մին եղած է: 1884ին Ֆրանսական Ակադեմիոյ անդամ ընտրուեցաւ, բայց ընդունելութեան հառը չարտասանած մեռաւ:

Abraham, — Abreuvoir

Abraham, Աբրահամ. — Այս բառը եբրայեցերէն կը նշանակէ Հայր բազմութեան: Հրէից մեծ նահապետը, ծնած է Քրիստոսէ 1996 տարի առաջ Քաղդէաստանի Ուր քաղաքն: Հայրն է Թարայ: Նոյի անդրանիկ որդւոյն Սեմի՝ ութերորդ սերունդէն է ինք: Ս. Գիրքը կը պատմէ թէ, իր կռապաշտ հօրը տան մէջ ունեցաւ ճըշմարիտ Աստուծոյ ճանաչողութիւնն եւ հպատակելով Անոր ըրած կոչին գնաց հաստատուիլ Միջագետաց Սառան քաղաքն՝ իր հօրը, կնոջն՝ Սարայի, եղբօրը՝ Նաքովրայ եւ եղբորորդւոյն՝ Դովտի հետ: Քիչ ատեն ետքը հայր, ըմբռնելով Աբրահամ կնոջն ու Դովտի հետ գնաց Քանանու երկիրը զոր Աստուած իրեն խոստացեր էր: Հոն Տէրը երեւցաւ իրեն եւ յայտնեց թէ իր զաւակները մեծ ազգ մը պիտի կազմեն: Սովի պատճառաւ եգիպտոս անցաւ, յետոյ Բեթել գնաց եւ Մամբրէի հովիտը քաշուեցաւ, թողլով որ Դովտ Սոդոմի մէջ հաստատուի: Աստուած նորէն երեւցաւ իրեն եւ յայտնեց որ իր կինը Սարա՝ արդէն 90 տարեկանը թեւակոխած՝ զաւակ մը պիտի ունենայ, հրամայեց որ ինք զինքը թլբատէ, ինչպէս նաեւ բոլոր իր սերունդը, ի նշան դաշինքին զոր կը կնքէր Աստուած իրեն հետ: Երբ Աբրահամու որդին՝ Իսահակ 25 տարեկան եղաւ, Աստուած հրամայեց Աբրահամին որ զայն զոհէ իրեն: Աբրահամ հնազանդեցաւ եւ Տիրոջ հրեշտակը վրայ հասնելով արգիլեց այս գոհը: Աբրահամ՝ Իսահակէն առաջ Իսմայէլ անունով զաւակ մը ունեցեր էր իր Հագար աղախինէն: Սառայի մեռնելէն ետքը Աբրահամ ամուսնացաւ Քետուրայի հետ եւ վեց զաւակներ ունեցաւ որոնք Ափրիկէի մէջ մէյմէկ ցեղերու նահապետներ եղան: Ինք մեռաւ 175 տարեկան եւ թաղուեցաւ Հերօնի մէջ: — Հին Կտակարանի մէջ Աբրահամ մեծ դէմք մըն է. իրմով կ'սկսի Իսրայէլացիներու ժողովուրդին պատմութիւնը, Ամբողջ արեւելքի մէջ իր անունը նշանաւոր եղած է: Քրիստոնեայները, Արարներն ու Հրեաները մեծ յարգանքով կը յիշեն զայն:

Abreuvoir, Աւազան — Երբեմն գետերու, լիճերու, առուներու, ճահիճներու եզերքները բնական աւազաններ կը ձեւացնեն, ուրտեղ կարելի է կենդանիները լողցնել եւ անոնց ջուր խմցնել: Ասոնց խորութիւնը շատ բլլալու չէ, որպէս զի կենդանիները խեղդուելու վտանգին չեն թարկուին, փոխապէս պէպի հոն թլեցնող ճամբան շատ ցից ըլլալու չէ. եթէ բնական աւազան մը սոյն պայմանները չգոհացներ, պէտք է մասնաւոր աշխատութեամբ մը յարդարել զայն. շատ աւելի լաւ կ'ըլլայ եթէ՝ այդ աւազանին բոլորտիքը գոցուի գետին մէջ ցիցեր գամելով՝ որոնց գլուխները ջուրէն բաւական վեր մնալու են. այս կերպով անասունները հոտանքէն չեն քշուիր եւ կամ շատ խոր տեղերը չեն երթար: — Երբ երկրագործ մը իր տրամադրութեան տակ բնական աւազան չունի, արհեստական կերպով կը շինէ հատ մը: Ազարակին մօտիկները կարելի եղածին չափ կ'աւտո հողի մը մէջ աւազաններ կը փորէ. ուր կը հաւաքուին անձրեւի ջուրերը եւ երբեմն ալ կը լեցուին հորի ջուրով: Այս աւազաններուն համար

հոգ տանելու է որ ջուրը մաքուր մնայ, մէջը աղտեղութիւն չի թափի: — Կենդանիներուն խմած ջուրը շատ պաղ ըլլալու չէ. լաւ կ'ըլլայ ամաններու մէջ լեցնել եւ թողուլ որ մթնոլորտին բարեխառնութիւնը ստանայ. ճաշէն ետքն է որ կենդանիներուն ջուր կը խմեն. երբեմն ալ կերին հետ խառն կուտան. սակայն երբեք ջուր խմցնելու չէ անոնց երբ աշխատութենէ կը վերադառնան ու քրտնած են: — Արհեստական աւազաններու մէջ թող տալու չէ որ հաւ, բադ, սագ եայլն մտնեն, որովհետեւ անոնց թափած փետուրները ջուրը խմող անասունին կոկորդը կ'երթան եւ սաստիկ հազ կը պատճառեն: Բոլորովին արգելելու է հոն պնակներ, ճերմակեղէն լուալը, երբեմն երբեմն ջուրը պարպելու եւ յատակի հաւաքուած ցեխը լաւ մաքրելու է: Երբ կենդանիներու մէջ համաճարակ կը ծագի յոյր հիւանդ կենդանիներուն զատ աւազան մը յատկացնելու է, որու առողջ անասունները չկարենան մօտենալ:

Abri, Պատուար. — Երկրագործութեան մէջ այս անունը կուտան բոլոր բնական ու ձեռակերտ շինուածներու որոնք կենդանիներն ու բոյսերը կը պաշտպանեն կլիմայի խստութեան դէմ: Բլուրները, դաշտերը, անտառները բնական պատուարներ են, որոնց ետին պատսպարուած դաշտերու մէջ բոյսերը շատ աւելի լաւ պայմաններու մէջ կ'աճին: Ինդէն ամէն մարդ գիտէ որ հովիտներու մէջ օդը աւելի մեղմ է քան նոյն բարձրութիւնը ունեցող ընդարձակ տափաստաններու մէջ: — Երբ հող մը ցուրտ ու սաստիկ հովերու դիմաց դիրք մը ունի, կը պատսպարեն զայն՝ յարմար դիրքերու մէջ ամիզակ (պօրսուզ ալաճը) եւ կամ նոճի (սեվիլ) ծառեր տնկելով, որոնք կենդանի պատուար մը կ'ըլլան հովերուն դէմ: Պարտէզի մը բոյսերը պաշտպանելու համար ամառուան տօթակէզ արեւին ճառագայթներէն, կարգ մը պտղատու ծառեր կը տնկեն արեւելքէն արեւմուտք ուղղութեան մէջ. եթէ հովերուն դէմ է այս պատուարը՝ ծառերը անանկ կարգերու վրայ կը տնկեն որ հովին դէմ ճակատ կազմեն: Երբ այդ դաշտին մէջ սովորաբար փչող հովերը արեւմուտքէն արեւելք են՝ տնկուած ծառերուն կարգը հիւսիս-հարաւ ուղղութեան մէջ կ'ըլլուի: Ասոնց համար ամենէն աւելի մնայուն տերեւ ունեցող ծառեր կը գործածուին. իւրաքանչիւր կարգ իւրամէ 3ական մէթը հեռաւորութիւն կ'ունենան, որոնց շուրջը 0 մ. 80 միջոց մը կը թողուի եւ մնացեալ տեղը կը տնկուի բոյսերը: — Ծառերը սառելէ ազատելու համար զանոնք յարգով պատելու եւ արմատին աղբի կոյտ մը դնելու է. այս նախազգուշութիւնները անհրաժեշտ են ամէն ծառի համար Փետրուարէ սկսեալ մինչեւ Մայիս ամիսը, Բանջարանոցներու մէջ ալ նոյն ժամանակներուն մէջ տունկերը ծածկելու է յարգէ ծածկոցներով: — Երբ ցորենները հնձելէ ետքը արտին մէջ կոյտեր չիւնելով կը թողուի որ չորնան, կընայ ըլլալ որ անձրեւ մը վրայ հասնի եւ ամէն բան ոչնչացնէ. այդ վտանգին առաջին առնելու համար իւրաքանչիւր դէզի վրայ կը ծածկեն յարգէ գլխանոցի ձեւով ծածկոցով մը, ձմեռ-

ՎԱՂԱՍԵՆ ԵՂԲՕՐՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Տ. ՊԱՂՏԻԿԵԱՆԻՆ

Մինչ մանուկ էիր՝ մօրս գուրգուրանքին
Առարկան էիր սիրուն եւ անգին,
Եւ ես նախանձոս այս բու վիճակին՝
Ջանայի շահիլ սերը մայրիկին:

Դրպրոց կ'երթայինք ամեն օր միասին,
Անգիսակ մահուան, խաւարին, լոյսին.
Չորս սարի ամբողջ՝ սորվեցանք կարդալ,
Խաղալ ու երգել, գրել քիչ մըն ալ:

Երբ տուն դառնայինք՝ խաղի առարկայք՝
Շուտ մեզ գրքներն հոլ, վեգ ու գրքակ,
Եւ մինչ իրիկուն յոգնած ու հրճնած՝
Սենեակ կուգայինք, անդորր, անկասկած:

Այսպէս կ'անցնէինք ժամանակն ամբողջ,
Երջանիկ էինք մարմնով սլ առողջ.
Ո՛չ վիճ ունէինք, ո՛չ հոգը կեանքին.
Ժամերնիս սահեւ միշտ զուարթագին:

Եւ չէինք խորհիր՝ կարելի է որ,
Վաղահաս մահը յոյսերնիս բոլոր
Բառնայ ու քանի, ցրցընէ վեր վար,
Քեզ առաջնորդէ շաւիղն անմոլար:

Աւա՛ղ, որ մահը խըլեց, սարաւ քեզ,
Հոգիդ բարձրացաւ երկինքն լուսագէտ,
Մարմինդ յանձնեցինք, ափսո՛ս, ցուրտ հողին,
Անմիտքար է ա՛լ եղբայրդ բուկին:

* * *

Եւ հիմա կանգնած պատկերիդ առջեւ,
Կը յիշեմ նախկին կեանքերնիս քեւ,
Ու կ'ըզձամ վալլել մանկական խաղեր,
Բայց յուսախա՛բ եմ, ո՞հ, չունիմ ընկեր:

Ա՛լ փախուտ տուին ժամերն հանելի,
Տըխուր վայրկեաններ՝ վրէժերով առլի՝
Հոգիս կ'օրօրեն, լ'հանոյք հեռու
Ըսփոփանք գրքներն մեջը գրքերու:

Տիարպէթի

ՄԻՀՐԱՆ ՊԱՍԹԱՃԻԱՆ



ԱՋՆՈՒԱԿԱՆ ԿԻՆ ՄԸ՝ ՈԼՈՒՆԻ ՄԸ ՎՐԱՅ

Ատենօք աղնուական մը կար, որ ճամարտօրէն բարձր ծագում ունեցող կնոջ մը հետ ամուսնանալ կ'ուզէր: Ուստի աշխարհիս չըջանը ըրաւ հատ մը գտնալու համար, եւ իրաւցընէ աշխարհիկ ու աղնուատուհմ կիներ չէին պակսեր, բայց բնաւ չէր կրնար վստահիլ թէ ասոնք ճամարիտ աղնուականուհիներ էին, միշտ անոնց վրայ բան մը կար՝ որ իրեն կասկածեցնել կուտար: Ու բոլորովին մշտնջար, իր տեղը կը վերադառնար, փափաքածը չգտնելէն յուսահատ:

Իրիկուն մը, սոսկալի օդ մը կ'ընէր, փայլակները իրար կը խաչածեւէին, ամպը կը գոռար, անձրեւը հեղեղի նման կը տեղար: զարհուրելի էր: Ապարանին դուռը զարնուեցաւ, եւ սպասաւորները փութացին դուռը բանալ:

Շքեղ տիկին մըն էր ան: Բայց, Աստուած իմ, անձրեւը եւ փութորիկը վայն ի վրան էին բերեր:

Ջուրը մազերէն եւ հագուստներէն վար կը վազէր, կօշիկներուն ցուկէն ներս կը մտնար եւ գարշապարէն դուռս կ'ելլար կոր, վերջապէս թրջած մուկ մըն էր դարձեր: Սակայն եւ այնպէս իբրեւ ճամարիտ հայ լայքի տիկին ինքզինքը ներկայացուց ան:

«Ինչ ապրանք ըլլալդ շուտով կրնանք հասկնալ մենք» մտածեց աղնուականին պառաւ մայրը: Յետոյ առանց բան մը ըսելու ննջասենեակ մտաւ, անկողինը կազմող բոլոր բաները վերցուց, եւ անկողինին մէջտեղը ոլոռն մը դրաւ: Ապա քսան հատ սաւան եւ քսան հատ աղուափետրիկ վրան ձգեց:

Ասիկա փափուկ տիկինին համար պատրաստուած անկողինն

էր. հետեւալ առաւուն իրեն հարցուցին թէ գիշերը ինչպէս անցուց :

— Շատ գէշ, պատասխանեց, ամբողջ գիշերը հազիւ հազ աչքս գոցեցի, շատ չարչարուեցայ, որովհետեւ անկողնին մէջ կարծր բան մը մինչեւ լոյս անհանգիստ ըրաւ ինծի ու մորթս կաս կապուտ եղաւ :

Այս պատասխանին վրայ հասկցան որ անիկա ճշմարիտ ազնուականուհի մըն էր, քանի որ քսան սաւանէն և քսան աղուափետրիկէն զգաց ոլոռնը : Օ՛հ, ի՛նչ փափուկ կին, ո՛վ պիտի կրնար անոր չափ քնքուշ մորթ ունենալ :

Ազնուականը՝ աղէկ մը ապահովուելով որ անիկա ճիշդ իր երազած մտատիպարն էր, զայն կնութեան առաւ, և ոլոռնը թանգարանին մէջ դրուցեաւ ուր տակաւին պէտք է որ գտնուի, եթէ երբէք արուեստասէր ձեռք մը զայն չվերցուց անկէ :

ԱՆՏԵՐՈՐՆ

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ԲԱՄԲԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՁ

Բամբակը մոլորագգիներու ընտանիքէն է. կրնայ խոտի ձեւով, ծառատունկ մը, կամ խոշոր ծառ մը ըլլալ : Պտուղը կազմուած է կլոր կամ հաւկթաձև պատեանէ մը սրածայր վերջացած. որու ներսը երեք կամ չորս մասերու բաժնուած է. իւրաքանչիւր մասի մէջ կան երեքէն եօթը հատ հռնտեր որոնց կցուած են քիչ կամ շատ երկար թելերու խուրձեր, երբ պտուղը կը հասունայ՝ պատեանը չդիմանալով այս թելերուն ձգտումին՝ կը պատռի. եթէ այդ առան երկրագործը չփութայ հաւաքել զանոնք, հռնտերը կ'սկսին թափիլ եւ հովը շատ հեռուները կը ցրցըկնէ զանոնք :

Բամպակենիի տարբեր տեսակներ, անյիշատակ ժամանակներէ ի վեր աճած են Հնդկաստանի, Հասարակածային Ափրիկէի և Ամերիկայի մէջ. երբ Սպանիացիները թափանձեցին Քուպայի, Մեքսիկայի և Բերուի մէջ, տեսան որ ամենայնեւեալ ժամանակներէ ի վեր բամպակեղէն հիստուածները կը գործածէին այդ տեղի բնիկները : Ամերիկեան տեսակը շատ տաք կլիմայի պէտք ունի. այնպէս որ կարելի չէ զայն մշակել Մ. Նահանգաց մէջ : ասոր հա-

մար երբ Ամերիկացիները բամբակի մշակութեան ձեռնարկեցին, ջանացին ասիական տեսակները յարմարցնել իրենց հողին, որոնց մէջէն խոտազգի բամբակեմի ըսուած տունկն է որ ամենէն աւելի ընդհանրացուցին: Տարեւոր բոյս մըն է աս, 60 սանդիւ. բարձրութեամբ, կարծր՝ գլանաձեւ ցօղունով, որու գագաթը թելթել-տըկած է եւ ամբողջ երկայնութեանը վրայ սեւ պզտիկ կէտեր ունի կարճուկ ճիւղերով: Տերեւները բաղկացած են հինգ բլթակներէ՝ կարճ, կլոր եւ լայն՝ սուր ծայրով մը վերջացած. ծաղիկները դեղնագոյն են:

Ջարմանալի պարագայ մըն է դիտել թէ Եգիպտացիները, Ասորեստանցիները եւ ուրիշ զանազան ազգեր, որոնք բամբակեմիներ արտադրող երկիրներու քովից կ'ապրէին՝ բնաւ գաղափար չունէին անոր օգտակար գործածութեան վրայ մինչև Հերոդոտոսի ժամանակները. այսինքն Քրիստոսէ հինգ դար առաջ, Ատկէ երկու դար ետքն է որ բամբակը մուտ գտած է Ասիոյ արեւմտեան մասերուն մէջ, ինչպէս նաեւ Նեղոսի հովիտին մէջ: Քրիստոսէ երկու դար առաջ, բամբակի առուտուրը Արաբացւոց ձեռքն էր՝ որոնք Պոմպայի հիւսիսային կողմերը Պարկաձայէն կը բերէին զայն կարմիր ծովու մէջ Ատիւլէ նաւահանգիստը: Այդ քաղաքէն է որ բամբակը կը տարածուէր Եգիպտոսի մէջ՝ ուրկէ կը տարուէր Յունաստան եւ Իտալիա, Նորէն Արաբներն են որ Քրիստոսի է. դարուն, բամբակի կտաւագործութեան արհեստը մտցուցին Հիւսիսային Ափրիկէի եւ Սպանիոյ հարաւային գաւառներուն մէջ Առաջին սպանիական գործարանները հաստատուեցան Սէվիլի, Գօրտուի եւ Կրքնատայի մէջ: ԺԳ. դարուն մէջ այս ճարտարար ևս ուր արածուեցաւ Չինաստանի, Ալպանիոյ եւ Իտալիոյ մէջ՝ ուր կեդրոնացաւ ի վենետիկ ու Միլան, եւ վերջապէս Անգլիոյ մէջ ուր առաջին բամբակի հակերը վենետիկեան եւ ճենովական նաւերը տարին:

Ամենէն առաջ այս նոր նիւթէն օգուտ մը քաղել չգիտցան. մի միայն ճրագի պատրոյգներ կը շինէին: Սակայն 1430ի ատենները Չէսթըրի եւ Լէնքասթըրի կտաւագործները միտք ըրին անով պատառներ հիւսել եւ յաջողեցան, ասանկով հիմնած եղանակով ճարտարարուեստ մը: Կառավարութիւնն այնքան քաջալերեց զայն որ ամէն քաղաքի մէջ, ջուլհակի գործիներ հաստատեց որպէս զի բոլոր գործ չգտնող գործաւորները անոր աշխատին:

Անգլիացիները ժամանակ մը ասիական բամբակ գործածեցին, երբ 1774ին Անգլիեան կղզիներէն առաջին հունձքերն հասան. մի եւ նոյն ատենները հնարուեցան բամբակը մանելու եւ հիւսելու մեքենաներն, որոնք չոգեչարժ մեքենայներու օժանդակու-

Թեամբ անօրինակ թռիչ մը տուին ճարտարարուեստի այս ճիւղին որ անկէջ ի վեր համաշխարհային օգտակարութիւն մը ստացած է:

Բամբակենին կը մշակեն հունտերը ցանելով՝ սովորաբար 10 հէքտար տարածութեամբ արտերու մէջ: Եթէ եղանակը նպաստաւոր ըլլայ, եօթն ամիսէն կը հասնի հունձքին ատենը: Հունտերը կը տնկեն իրարմէ երեք մէթր հեռաւորութեամբ գիծերու վրայ. ծաղիկը բանալէ առաջ երկու անգամ քաղհան կ'ընեն, անգամ մըն ալ նոյնը կը կատարեն հունձքէն ետքն եւ գետնէն մէկ ոտք բարձրութենէ վեր բոլոր մասերը կը կտրեն. այս կերպով հինգ տարի կրնայ դիմանալ մէկ բոյսը:

Հունձքի ժամանակ, կիներ ու տղաքներ երկու մարդու հսկողութեան տակ կ'երթան խումբով դաշտին մէջ բամբակ հաւաքելու: Հո՛ն մօտիկը թեթեւ բնակարան մը կը շինեն, ուր պարտաւոր են անցնել ամբողջ հունձքին ժամանակն, որովհետեւ անդադրում հսկողութեան պէտք կայ սոյն գործողութիւնը կատարելու համար. պատեանները բացուելուն պէս անհրաժեշտ է անմիջական կերպով բամբակը հաւաքել, թէ ո՛չ գետին կը թափին. եւ այդ գետին թափածները եթէ հաւաքուին, շուտով կը դեղնին ու իրենց արժէքը կէս առ կէս կը կորսնցնեն:

Ամերիկեան բամբակի ամենէն ընտիր տեսակներն են Փլօրիտայի եւ ժէօրժի նահանգներուն մէջ յառաջ եկածն որոնք թէ մշակման հողի ազնուութեան գերազանցութիւնը կը վայելեն եւ թէ ամենամեծ խնամով կը հաւաքուին: Ասիոյ մէջ բամբակը՝ պատեանով միասին բրցնելով կը հաւաքեն. սակայն ասոնց մէջէն բամբակը զաւել շատ դժուար ըլլալով՝ Ամերիկեան բամբակէն շատ աւելի աժան գիներով կը ծախուին:

Կիները կը հաւաքեն բամբակը խոշոր կողովներու մէջ. կեղեւներուն մէջէն մատով դուրս կը հանեն թելիկներն առանց ո՛ր եւ է կարծր մաս միասին առնելու. երբ կողովին լենայ կը տանին երկու վերակացուներուն կը յանձնեն որոնք տարածելով կը չորցնեն. լաւ մը չորնալէն ետքն է որ շտեմարաններու մէջ կ'ամբարեն: Մէկ ծառատունկին վրայ մի եւ նոյն ժամանակ թէ հասած պըտուղներ եւ թէ ծաղիկներ գտնուելով կեղեւները մի եւ նոյն ժամանակ չեն բացուիր. որով հունձքին տեւողութիւնը կ'ընդգրկէ Օգոստոսէն մինչեւ Հոկտեմբերի վերջերն անցած ժամանակը:

Հունձքէն ետքը կարգը կուգայ հունտերը բամբակի թելերէ գտնելու գործողութեան, որ շատ կարեւոր ու միանգամայն շատ դժուարին է. որովհետեւ թելերը շատ ամուր փակած են հատիկներուն: Առաջները այս գործողութիւնը ձեռքով կը կատարուէր. Հնդիկ գործաւոր մը ամբողջ մէկ օրուան մէջ մէկ լիպրա բամբակ հաղիւ կրնար ստըկել. յետոյ ձեռքով դարձող մեքենաներ հնա-

րեցին որոնք օրական 65—70 լիպրա կրնան ստըկել խիստ մաքուր կերպով: Հիմա աւելի մեծ մեքենաներ կան շոգիով բանող, որոնց մէջէն սակայն բաւական մաքուր չելլար: Երկրորդ գործողութեան մը կ'ենթարկեն զայն մէջը մնացած քանի մը կարծր հատիկները զատելու համար. խոշոր թմրկածեւ գլաններ կան, որոնց մէջ դնելով բամբակի թելիկները արագ արագ կը դարձնեն. թելերը կը տարադնին եւ կարծր նիւթերը առկախ կը մնան մէջերն: օգի հոսանք մը կը հաւաքէ զանոնք եւ դուրս կը զատէ:

Վերջին գործողութիւնը կ'ըլլայ ջրաբաշխական մամուլներու տակ զանոնք ճնշելով քառակուսի հալիւր կապել:

Նորագոյն վիճակագրութիւն մը 8,652,000 հակ կը հաշուէ ամերիկեան բամբակի արտադրութիւնը, զորս Միացեալ Նահանգները, Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա, Աւստրիա, Գերմանիա, Պելճիքա եւ Զուիցերիա իրարու ձեռքէ կը խլեն:

Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՉԻՆԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

Երբ խոնարհ վիճակէ մը բարձր աստիճանի մը անցնիս, մի' մոռնար ընդունած բարերարութիւններդ, եւ մի' յիշեր կրած նախատինքներդ:

— Երկարատեւ յաջողութիւն մը կ'ծնանի անհոգութիւն ու գոռոգութիւն:

— Թէ որ առանց գէշ դիտաւորութեան մը գիշերը քալելու ըլլամ. կրնամ արգիլել շունները որ չի հաչեն ետեւէս:

ԿՈՄՓԻԿԻՈՍ

ՄԱՀԱՄԵՐԶ ԲԱՆՍՏԵՂԾԸ

Վերգէր բանաստեղծը, եւ իր հաւատարիմ կանթեղին տոգոյն ճառագայթումները կը նուաղէին աստիճանաբար: Պուէտը՝ ինքն ալ ճրագին պէս մարելու մօտ՝ կը բարձրացնէր իր ցաւագին տըրտունջները:

« Կեանքիս ծաղիկը խամրեցաւ, ճակատագրիս կատարումը կանխահաս է: Երկածին օրուանս այգը գրեթէ ընդհուպ կ'ողջունէ իր երեկոն:

« Փշրուէ՛. փշրուէ՛ ուրեմն սիրական քնարս, իմ՝ յաւիտենական քունէս վերջամնաց պիտի չկրնաս ըլլալ դուն, քու փցուն տաղերդ, գերեզմանին մէջ, ինծի հետ պիտի նիրհեն առանց զարթումի: »

« Պիտի չկրնամ երեւիլ ան ահեղ ատեանին առջեւ, ուր ապագայ սերունդը անաչառ եղանակաւ մը կը դատէ երկրածին փառքերը: »

« Իմ տիտուր ուղեւորութեանս թափանցած ընկերներ, ո՛վ ա՜նուշ եւ սիրասուն բարեկամներ, աննշան երգերէս՝ իբր հետք՝ ծաղկեփունջ մը կազմեցէք, քերթուածներուս մի քանին փրկեցէք մոռացումէն: » (1)

Բանաստեղծը կ'երգէր այսպէս, երբ հաւատարիմ քնարը յանկարծ սահեցաւ ինկաւ իր դողդոջուն ձեռքէն, կանթեղը մարեցաւ, ինքն ալ անոր պէս մաքեցաւ հետեւեալ օրը:

Թարգ. ԱՐՄԵՆԱԿ Յ. ԿԻՐՎԱՆԵԱՆ

ՄԻԼՎՈՒԱ

(1) Հոս ի դէպ է յիշել յաւիտ ողբացեալ Պ. Դուրեանի հետեւեալ քառեակը.

Իսկ աննրբան եքե մնայ

Երկրի մէկ խորեն հողակոյսն իմ,

Եւ յիշատակս ալ քառամի,

Ա՛հ, ա՛յն ասեմ ես կը մեռնիմ:

ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՕՍԱՆԻՐ

ԳԱԻԱԶԱՆՆԵՐԸ



Ամէն մէկ աշակերտին ձեռաց մէջ պէտք է որ գաւազան մը գտնուի: Աշակերտ մը օդին մէջ կը նետէ բարակ փայտէ օղակ-

ներ՝ թէ բարձրէն եւ թէ՛ երկայնքէն. միւս աշակերտներն ամէն կողմէ այդ օղակին կողմը կը վազեն՝ եւ կը ջանան իրենց գաւազաններով բռնել օղակներն: Ամէն անգամ որ օղակ մը կարենան բռնել, կը նշանակեն տետրակի մը մէջ, եւ ո՛վ որ իրենց մէջ որոշեալ ժամանակի մէջ յաջողած է աւելի նիշ առնուլ՝ այն է խաղին մէջ յաղթողը:

Արգիլուած է գաւազանը վար իջեցնել եւ օղակները ձեռքով բռնել:

Տպագրիչ եւ Հրատարակիչ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ՀԱՏՏԷՍԻ, ԹԻՒ 38. ԻԴՏԱՄ ԼՐԱԴՐԻ ԴԷՄ

Գաւառները գլխաւոր քաղաքներու մէջ ընդհանուր ներկայացուցիչներ ունի տպարանս, որոնց կրնան դիմել տպագրական ամէն տեսակ գործեր ունեցող, եւ կամ ո՛ր եւ է գրքի մը պէտք ունեցողները, եւ փոխարժէքն անոր վճարելով, կ'ընդունին ապսպրանքները: Այս միջոցով իրենք կ'ազատին թէ՛ աւելորդ ծախսերէ եւ թէ՛ նամակի եւ այլ կորուստներէ. եւ ի՛նչ որ ամէնէն կարեւորն է, փոքր գումարներու փոխադրութեան համար յսուջ եկած դժուարութիւններէն ու հոգերէն կ'ազատին:

Գաւառներու մէջ Հանրագիտակի ՄԵԺ. Գործակալներու դիմողները կրնան սա առաւելութիւնն ալ վայելել որ, թէ՛ իրենց յանձնարարութիւնները կէտ առ կէտ կը կատարուին ամենակարճ ժամանակի մէջ եւ թէ՛ միշտ վստահելի անձնաւորութիւն մը կ'ունենան իրենց մօտ պատասխանատու ամէն առթիւ:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵՍԱՆ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
1910

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
1910

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
1910

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
1910

Նոր տարին սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբա-
թական 20 էջէ բաղկացեալ :

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր :

Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼԻ

Ամասիա, Հայկազուն էֆ. Սանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պազպետեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Նիքոկիա, Սաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Երասմեան
Էրզաւո, Միսաք էֆ. Ս. Սելզոնեան
Թալաս, Կարապետ էֆ. Գօճաեան
Թեքթեալ, Ասատուր էֆ. Արոնեան
Թրիպօլի Գրիգոր էֆ. Հ. Գարագաշեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիրասոն Թովմաս էֆ. Գարագաշեան
Կիւրիք, Գրիգոր Մ. էֆ. Սանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Պօտիկեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Գրիգոր Կահ. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան Արամ էֆ. Գարակէօյեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Քարակապուրեան և Ընկ.
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Նիսաւր, Յովհաննէս էֆ. Փանոսեան
Շապին Գարա հիսար. — Գագիկ էֆ. Օղանեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Տիւրքմէն, Լեոն էֆ. Սրապեան
Տրապիզոն Կովստաս էֆ. Զարիֆեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան